ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 6-Ա

<<ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով,հիմք ընդունելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետը և Թումանյան քաղաքի բնակչուհի Անուշ Ոսկանյանի դիմումը՝
որոշում եմ.

1.Թումանյան քաղաքի բնակչուհի Անուշ Ոսկանյանին ս/թ փետրվարի 1-ից թիվ 2 25.01.2021 թվականի ժամկետային աշխատանքային պայմանագրի համաձայն ընդունել աշխատանքի, որպես <<Թումանյան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:
2.<<Թումանյան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի գույքի և սննդամթերքի հանձնում-ընդունման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1/.Հանձնաժողովի նախագահ՝Անուշ Ամիրջանյան /Գլխավոր մասնագետ-հաշվապահ/,
2/-------//------անդամ՝ Էդգար Վարդանյան/Առաջատար մասնագետ/,
3/-------//------անդամ՝ Մարիամ Մխեյան/Առաջին կարգի մասնագետ/,
4/հանձնող՝ Հայկանուշ Աղամյան/ՀՈԱԿ- ի տնօրեն/,
5/ընդունող՝ Անուշ Ոսկանյան/ՀՈԱԿ- ի դաստիարակ/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 7-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ,ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42 և 43-րդ հոդվածներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 2-րդ և 5-րդ կետերով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով,ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 731-Ն և 18.05.2006թ թիվ 912-Ն որոշումներով, ՀՀ կառավարության 28.07.2005թ թիվ 1368-Ն որոշմամբ , հիմք ընդունելով կառույցը իրականացրած Գագիկ Քառյանի /մուտք՝ 19.01.2021թ. թիվ 19/ դիմումը և շինության և հողամասի <<ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ–ի կողմից կազմված հատակագծերը՝
որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի /գ. Աթան/ վարչական տարածքում գտնվող 06-011-0130-0002 ծածկագրից առանձնացված արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլարտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության 0,155 հա մակերեսով հողամասի վրա 2002թ. ինքնակամ կառուցված 340,4քմ մակերեսով անասնագոմի նկատմամբ ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:

2. Վերը նշված ինքնակամ կառուցված անասնագոմը ճանաչել օրինական՝ համաձայն սույն որոշմանը կից, օրինական ճանաչված կառույցի և դրանով զբաղեցվա ծ ու պահպանման և սպասարկման համարա
առանձնացված հողամասի հատակագծի:

3. Անասնագոմի կառուցման և սպասարկման համար զբաղեցրած 0,155հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

4. Անասնագոմը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Անշարժ գույքին տրամադրել նոր փոստային՝ <<ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Աթան, 4-րդ փողոց,թիվ 27>>հասցեն:

6. Հողամասի սահմանները որոշվում են <<ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

7. Օրենքով սահմանված ժամկետում ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Գագիկ Քառյանին օրինականացված անասնագոմը և հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

8. Որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

20 21 թ. հունվարի 27
գ.Թումանյան